

Հավելված

Հաստատվել է հանրապետության  
19.09.2016թ. թիվ 16-Ն հրով որոշմամբ



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ

ԶԱՌԻԹԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021ԹԹ.  
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Կազմել է համայնքի ղեկավար՝ Սիմոն Բարսայանը

2016թ., գ.Ջառիթափ

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք.....
- 2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն.....
- 2.2. Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը .....
- 2.3. Համայնքում իրականացվող ծրագրերը.....
- 2.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումներ.....
- 2.5. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ.....
- 2.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն .....
3. Համայնքի զարգացման նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում.....
- 3.1. Համայնքի զարգացման տեսլական.....
- 3.2. Համայնքի զարգացման ծրագրերի, նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում.....
4. ՀԶԾ ֆինանսավորում.....
5. ՀԶԾ մոնիթորինգ.....

## 1. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Ջառիթափ համայնքի մեջ ընդգրկված են Ջառիթափ, Սարավան, Արտավան, Գոմք, Մարտիրոս, Սերս, Բարձրունի, Խնձորուտ և Նոր Ազնաբերդ բնակավայր : Համայնքը ունի 4340 մշտական բնակչություն, որից շուրջ 2400-ը՝ 18-60 տարեկան: Բնակչությունը հիմնականում զբաղվում է անասնապահությամբ, հողագործությամբ և մեղվապահությամբ ինչը ոչ բոլոր դեպքերում է ապահովում բավարար եկամուտներ ապրուստի միջոցները հոգալու համար, նպաստելով համայնքի բնակչության միգրացիայի աճին, հետևաբար համայնքում առաջնային անհրաժեշտություն է աշխատատեղերի ստեղծումը:

Համայնքի Արտավան, Գոմք, Մարտիրոս, Սերս, Բարձրունի, Խնձորուտ և Նոր Ազնաբերդ բնակավայրը ունեն գազաֆիկացման կարիք, որը նույնպես օրակարգային հարց է: Համայնքի մի շարք բնակավայրերում՝ Մարտիրոս, Սերս, մշակույթի տուները գտնվում է անմխիթար վիճակում, Ջառիթափում մշակույթի տունը գտնվում է կիսակառույց վիճակում ինչը խոչընդոտում է միջոցառումների և հանդիպումների կազմակերպմանը: Համայնքի բոլոր բնակավայրերում չկան երիտասարդական և այլ ժամանացային կենտրոններ:

Հետևաբար ելնելով վերոնշյալ խնդիրներից համայնքում առաջիկա տարիներին նախատեսում է իրականացնել հետևյալ ծրագրերը՝ օգտագործելով համայնքի ուժեղ կողմերը, համայնքային բյուջեի միջոցները, ինչպես նաև ՀՀ Կառավարության և այլ միջազգային կառույցների աջակցությունը.

- Ջառիթափ խոշորացված համայնքում տեխնիկայի վերազինում և տուրիստական ենթակառույցվածքների ստեղծում
- Նոր աշխատեղերի ստեղծում

- Գազաֆիկացնել Արտավան, Գոմք, Մարտիրոս, Սերս, Բարձրունի, Խնձորուտ և Նոր Ազնաբերդ բնակավայրերը
- Փողոցների ամբողջական լուսավորություն՝ Նոր Ազնաբերդ, Սերս, Ջառիթափ, Արտավան և մասնակի Մարտիրոս բնակավայրերում
- Գերեզմանոց տանող ճանապարհի բարեկարգում և գերեզմանոցների ցանկապատում
- Միջհամայնքային ներհամայնքային և հանդամիջյան ճանապարհների բարեկարգում
- Համայնքի բոլոր բնակավայրերում մաքրության և բարեկարգման խնդիրների կանոնակարգում
- Ոռոգման և խմելու ջրի ցանցերի բարելավում
- Զբոսաշրջության զարգացում
- Համայնքում երիտասարդական կենտրոնի ստեղծում

Համայնքը համագործակցում է մի շարք ծրագրերի հետ, նախատեսվում է հնարավորինս ընդլայնել համագործակցության շրջականները և ներգրավվել նոր ծրագրեր, մասնավորապես այժմ համայնքը համագործակցում է «Լիդյան Արմենյա» ՓԲԸ-ի, Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի, Վայրի բնության և պատմամշակութային արժեքների պահպանության հիմնադրամի, «Ռ-տելեկոմ» ՓԲԸ-ի, «Արմենտել» ՓԲԸ-ի, «Յուքոմ» ՍՊԸ-ի, «Բի-կեյ խորհրդատվական խումբ» ՓԲԸ-ի, Հելֆեր ֆուլեր «Արդի» ծրագրի, ինչպես նաև համագործակցում է «Ռազմավարական զարգացման գործակալություն» ՀԿ-ի հետ:

## 2. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

### 2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն

Ջառիթափ համայնքի բնակավայրերը վերաբնակեցվել են 1828թ. Պարսկաստանի Սալմաստ գավառից ներգաղթած հայ ընտանիքներով: Համայնքը ծովի մակերևույթից բարձր է 1400-2100 մ, ունի հին պատմություն, ինչի մասին վկայում են համայնքում գտնվող վանքերն ու մատուռները:

Մարտիրոս բնակավայրի տարածքում է գտնվում 13-րդ դարում կառուցված

(Մարտիրոսացվանք) Վիմափոր եկեղեցին 1286թ., Մարտիրոսի Սուրբ Աստվածածին եկեղեցին՝ 1866թ. ծննդական-խաչքար 1283թ., Սբ. Հովհաննես, Գայանե և Հռիփսիմե մատուռները խոշորատապանաքարերով և խաչքարերով. պատմական Հողոցիմ(ք) բազմաթիվ խաչքարեր, Վարդանանց պատերազմուն և Արցախյան հերոսամարտում զոհվածների եղեռնի նահատակների հիշատակի խաչքար, Մաթևոս վարդապետի խաչարձանի դամբարանադաշտով 13-14-րդ դար, մեծ ու փոքր բնակատեղերի բազմաթիվ եկեղեցիներ, վանքեր, մատուռներ, բերդեր, տարբեր տեսանշկի խաչքարեր :

Սերս բնակավայրում կան <<Մեծ Վանք >> ( Սբ. Հովհաննես 19-րդ դար և 17-րդ դար ) եկեղեցիներ, իսկ 1.5 կմ հարավ- արևմուտք՝ << Թուխ Մանուկ 17-րդ դար >> մատուռ, խաչքարեր՝ Աստվածատուր, Յինի, Արիջանի, Կիրակոսի:

Բարձրունի գյուղը նախկինում ունեցել է «Սուլթան Բեկ» անվանումը:

Վերանվանվել է 1930 թվականին: Սակայն գյուղն ավելի հին է քան ենթադրվում է: Այդ մասին վկայում են «Հին գյուղ» կոչվող տարածքում հայտնաբերված, 7-րդ դարով թվագրված խաչքարերը, ինչպես նաև զարդաքարերով, սրբատաշ քարերով կիսավեր

կառույցները: Բարձրունիում պահպանվել են 1884 թ.-ի և XIII-XIV դարերի եկեղեցիներ,

XIX դարի մատուռներ, XIII-XVII դարերի խաչքարեր, իսկ 1 կմ հարավ-արևելքում՝ Սբ.

Գևորգ եկեղեցին:

Նոր Ազնաբերդ գյուղը (նախկինում Գյուլխստան) կառուցվել է 1949 թվականին, բնակեցված է եղել ադրբեջանցիներով: 1988 թվականին հայ-ադրբեջանական հայտնի դեպքերից հետո այն վերաբնակեցվել է Նախիջևանի ինքնավար

Հանրապետության Զնաբերդ գյուղից Հայաստան փախած հայերով: Նոր Ազնաբերդ է վերանվանվել 1991 թ.-ին: 1991 թվականին գյուղի մուտքի մոտ՝ Տաք ջուր կոչվող տարածքում, տեղադրվել է դարաբաղյան շարժման զոհերի հիշատակին նվիրված հուշակոթող և խաչքար: Ճահուկ գետի վրա են գտնվում Վերին Շենիկ գյուղի ավերակները:

Խնձորուտ գյուղը հիմնադրվել է 1826-1828 թթ. ռուս պարսկական

պատերազմի հետևանքով Պարսկաստանի Խոհ նահանգի Սալմաստ գավառից գաղթած հայ գաղթականների հաշվին: Նախկինում գյուղը ունեցել է «Սուլթան բեկ» անվանումը: Վերանվանվել է 1930 թվականին: Սակայն գյուղն ավելի հին է, քան ենթադրվում է: Այդ մասին վկայում են «Հին գյուղ» կոչվող տարածքում հայտնաբերված,

7-րդ դարով թվագրված խաչքարերը, ինչպես նաև գարդաքարերով,  
սրբատաշ քարերով կիսավեր կառույցները:

Խնձորուտում կա XIX դարի եկեղեցի: Գյուղից մոտ 2 կմ հարավ ընկած են Խնձորուտ  
գյուղի ավերակները իսկ նրանից հյուսիս-արևմուտք գտնվում են Աղոպեն գյուղի  
ավերակները:

Ջառիթափ գյուղը գտնվում է Վայքի լեռնաշղթայի հարավ-արևելյան մասում: Հյուսիս  
արևելքից սահմանակից է պետական անտառ-արգելանոցին:

Գյուղի հյուսիսային սահմանով անցնում է Արփա գետը: Գյուղը փռված է յոթ բլուրների  
վրա, գյուղամիջով անցնում է Փշոնք գետը, որին միանում են չորս փոքրիկ վտակներ:

Ջառիթափում կան XIX դարի եկեղեցի, ամրոցներ (XVII-XVIII դարեր), հյուսիս-արևելյան  
մասում՝ Սբ. Վառվառա մատուռ (XIX դար): Խաչքարեր 9-18 թ դարերի:

Գոմք գյուղ 1989 թ. եկան առաջին հայ բնակիչները, որոնք մարզապուրծ փախել  
էին Սումգայիթից, Բաքվից, Կիրովաբաթից և այլ վայրերից, մի քանիսն էլ եկան աղետի  
գոտուց: Գոմք գյուղը գրով հիշատակված է Ստեփանոս Օրբելյանի «Սյունիքի  
Պատմությունը» մեծարժեք երկում: Մեծանուն պատմիչը պարզել է, որ Գոմք գյուղը վեց  
չափ հարկ է տվել Տաթևի վանքին, որն էլ նշանակում է, որ շենը եղել է ոչ շատ մեծ:

Գյուղն այդպես էլ հիշատակված է «Գոմք», և հիմնադուրկ է այն ենթադրությանը, թե դա  
հին Գոմեր գյուղն է:

Շենը եղել է ոչ շատ մեծ, սակայն աչքի է ընկել իր մի հրաշալի գարդով, որը մեր  
բազմադարյան ճարտարապետության եզակի նմուշներից է: Դա որմնափակ խաչքար-  
մատուռն է, որն իր կառուցվածքով, մտահաղացմամբ, քանդակներով և վիմագիր  
հիշատակարաններով մի անգնահատելի կոթող է: Ըստ պահպանված  
արձանագրության՝ Խաչքար-մատուռը կառուցվել է 1263 թվականին:

Գյուղամիջում գտնվում է եկեղեցու ավերակներ, որն իր ոճով ավելի շատ առնչվում է  
16-17-րդ դարերին:

Գոմքում կա 1263 թ.-ի մատուռ, XVI-XVII դարերի եկեղեցի և XI-XVII դարերի խաչքարեր:

Արտավան գյուղը նախկինում կրել է Ագխաչ անվանումը և ընդգրկված է եղել Երևանի  
նահանգի Նախիջևանի գավառում: Ըստ Ալիշանի գյուղը նախկինում եղել է Մեծ

Հայքի Սյունիք աշխարհի ճահճուկ գավառի Աղբերախաչ գյուղը: Պահպանվել են XVII-  
XIX դդ. եկեղեցիներ, XIII-XIV դդ. և XIX դարի մատուռներ, խաչքարեր (XI-XV դդ., XVII-  
XVIII դդ.): Գյուղի կենտրոնում 12-րդ դարում կառուցված կամուրջը: Գյուղից 2 կմ հեռու  
գտնվում է Մարաթուզ գյուղը իր խաչքարերով և դամբարանադաշտերով, Դարբնի գյուղ  
իր դամբարանադաշտերով:

Սարավանում գյուղում կան XVII դարի ավերակ եկեղեցի, XIII դարի աղբյուր-  
հուշարձան, 4-5 կմ հարավ-արևմուտքում՝ XIV-XIX դարերի մատուռ և XI-XVII  
դարերի խաչքարեր:

Բնակչությունը հիմնականում զբաղվում է անասնապահությամբ,  
հողագործությամբ այգեգործությամբ և մեղվաբուծությամբ: Համայնքը մարզկենտրոնից  
գտնվում է 26 կմ հեռավորության վրա: Համայնքով անցնում է Երևան-Մեղրի  
միջպետական ճանապարհը:

Համայնքի տարածքում կան հանքային հանածոներ, շինարարական  
քար՝ գրանիտ, տրավերտին և բազմամետաղային հանքավայրեր:

Համայնքի առկա (ներառյալ ժամանակավոր ներկա) բնակչության թիվը 2016թ.  
հունվարի 1-ի տվյալներով կազմում է 4340 մարդ, մշտական բնակչությունը՝ 4232 մարդ  
1321 տնտեսություն:

Համայնքը կազմավորվել է 2016 թ. Հոկտեմբեր ամսին ,որի մեջ ընդգրկված է 9 բնակավայր  
Ներկայացվում է ժողովրդագրական տվյալները ըստ բնակավայրերի

Բնակավայր երը	Ընդ. բնակիչ	կանայ ք	տղամա րրիկ	թոշակ առու	փա խս տա կան	Միակ ողման ի ծնողա գուրկ	Պատե րագմի մասն ակից	Հաշվ անդա մ	նպաս տառո ւ	Աշխա տուն ակ բնակի չ	Աշխատ անք ուեցող	գոր ծագ ուրկ
Զառիթափ	1515	757	758	217	-	5	28	61	59	840	195	48
Սարավան	297	145	152	26	-	4	1	2	6	195	24	-
Արտավան	296	145	151	57	-	2	4	8	12	135	37	5
Գոմք	287	152	135	22	21	2	5	8	25	220	36	15
Մարտիրոս	667	331	336	90	-	6	17	27	28	340	55	-
Սերս	208	114	94	52	-	-	-	17	9	135	17	-
Բարձրունի	405	203	202	66	-	6	51	12	11	202	37	-
Խնձորուտ	519	263	256	77	-	4	31	25	20	270	49	-
Նոր Ազնաբերդ	146	82	64	27	14	2	15	6	12	72	14	-
ընդամենը	4340	2192	2148	634	35	31	152	191	182	2409	464	68

Համայնքի վարչական տարածքը 42261 հա է, այդ թվում՝ գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 39272 հա:

Համայնքի բնակավայրերում գործող դպրոցները, առողջության կենտրոնները, մշակույթի տները և գրադարան:

Բնակավայրերը	Հիմնական Դպրոց աշակերտ	Ութամյա դպրոց	Մանկապարտեզ երեխա	Մշակույթի տուն	Առողջության պահպանման կենտրոն բուժ կետ	գրադարան
Ջառիթափ	1/187	-	1/60	-	1	1
Սարավան	1/ 22	-	-	1	1	1
Արտավան	1/62	-	-	-	1	1
Գոմք	1/36	-	-	1	1	1
Մարտիրոս	1/96	-	-	1	1	1
Սերս	-	1/12	-	1	1	1
Բարձրունի	1/41	-	-	1	1	1
Խնձորուտ	1/74	-	-	-	1	1
Նոր Ազնաբերդ	-/29	-	-	-	1	

## 2.2 Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակը

Ստորև ներկայացված է համայնքի ընդհանուր և սեփական եկամուտների դինամիկան.:

2017 թվականի տարեկան բյուջեի նախագծով համայնքի ընդհանուր տարեկան եկամուտները կազմում են 235666 հազ.դրամ, որից սեփական եկամուտներ՝ 152437 հազար դրամ:

Համայնքում այժմ գործում , 27 անհատ ձեռնարկատերեր, որից 11 մանրածախ վաճառքի կետեր, 14 հասարակական սննդի կետ , Ճան-շին ՓԲԸ-ն, մեկ զագալցակայան և մեկ հյուրերի փոքր արտադրամաս, որոնց արտադրանքի սպառման հիմնական շուկան ոչ միայն Վայոց ձոր այլև հարակից մարզերն են:



Համայնքի բնակչությունը զբաղվում է հողագործությամբ, անասնապահությամբ, այգեգործությամբ, մեղվաբուծությամբ: Ստացված հիմնական արտադրանքը սպառվում է հիմնականում քաղաք Երևանում:

Համայնքն ունի զբոսաշրջության զարգացման համար նպաստավոր պայմաններ, մասնավորապես համայնքը հարուստ է պատմա մշակույթային հուշարձաններով և բազմաթիվ խաչքարերով :

Այժմ համայնքում գործում են թվով 5 հյուրատներ, որոնք հաջողությամբ գործում են, սակայն կարիք կա ավելացնելու համայնքում հյուրատների թիվը, որը նախատեսվում է կատարել դոնոր կազմակերպությունների աջակցությամբ (որի փորձը արդեն կա), ինչպես նաև դիմելով ծրագրերի (մասնավորապես մարզում գործում է Թրփանձեան գյուղական համայնքների զարգացման ծրագիրը, որը տրամադրում է 6% վարկեր համայնքների բնակիչների կողմից ներկայացված բիզնես ծրագրերի համար):

Համայնքում գործում է 7 միջնակարգ դպրոց, որտեղ հաճախում են թվով 547 (2016թ.տվյալներով) աշակերտներ մեկ ութամյա դպրոց որտեղ հաճախում են թվով 12 աշակերտներ: Դպրոցում գործում են նախադպրոցական կրթական ծառայություններ 4-5 տարեկան երեխաների համար, որոնց թիվը 2016 թ. կազմում է թվով 48 երեխա, մեկ մանկապարտեզ որտեղ հաճախում են թվով 60 երեխաներ :

Համայնքի բոլոր գյուղերում գործում է բուժ կետեր, միայն Ջառիթափում բժշկական ամբուլատորիա՝ ՊՈԱԿ-ը, որը սպասարկում է՝ խնձորուտ, Նոր Ազնաբերդ, Սերս և Բարձրունի համայնքները շուրջ 2793 բնակչություն:

Համայնքում նպաստառու ընտանիքների ընդհանուր թիվը կազմում է շուրջ 182: Թոշակառուների ընդհանուր թիվը կազմում է շուրջ 634, որից հաշմանդամության թոշակ 166, կենսաթոշակառու 468:

### 2.3 Համայնքում իրականացվող ծրագրերը

Առաջիկա հինգ տարիներին համայնքը պատրաստվում է համագործակցել ՀՀ Կառավարության, միջազգային դոնոր կազմակերպությունների, ինչպես նաև անհատ ներդրողների հետ:

Համայնքը համագործակցել և առաջիկայում շարունակելու է համագործակցել <<Ռազմավարական զարգացման գործակալություն>> հասարակական

կազմակերպության հետ «Անասնապահության զարգացում Հարավային կովկասում» ծրագրի շրջանակներում, նպատակ ունենալով խթանել անասնապահության զարգացումը համայնքում:

Համայնքը ակտիվ համագործակցում է «ՎԻՎԱՍԵԼ-ՄՏՄ» ՓԲԸ-ի հետ, որի արդյունքում համայնքում արդեն իրականացվել են փոքր ծրագրեր, և առաջիկայում նախատեսվում է շարունակել համագործակցությունը՝ իրականացնելով նոր ծրագրեր:

Համայնքը աշխատանքներ է տանում համագործակցելու Հայաստանի «Ֆուլերտոնաշինական կետրոնի» հետ, նպատակ ունենալով համայնքի անապահով և տան կարիք ունեցող ընտանիքներին օգնելու և աջակցելու տան վերանորոգման կամ կառուցելու հարցում:

Համայնքը պատրաստակամ է համագործակցել անհատ ներդրողների հետ, ովքեր կցանկանան որևէ ներդրում անել համայնքում:

## **2.4 Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումներ**

Համայնքի բյուջեի եկամուտները գոյանում են համայնքի բյուջե վճարվող հողի հարկից, գույքահարկից, վարձավճարներից, տեղական տուրքերից և ֆինանսական համահարթեցման նպատակով տրվող դոտացիաներից: Համայնքի բյուջեի եկամուտների սեփական եկամուտները փոքր մաս են կազմում:

Ստորև ներկայացված է համայնքի սեփական եկամուտների փաստացի տվյալները 2017 թվականի բյուջեի նախագծով նախատեսվել է 152437.0 հազար դրամ:

2017 թվականին նախատեսված ընդհանուր եկամուտների չափը կազմում է 235666 հազար դրամ,:

Առաջիկա տարիներին ակնկալվում է պետության կողմից տրամադրվող ֆինանսական համահարթեցման նպատակով տրվող դոտացիաների չափի ավելացում, ինչպես նաև նախատեսվում է ավելացնել համայնքի բյուջե մտնող սեփական եկամուտների չափաբաժինը, ի հաշիվ տեղական տուրքերի և վճարների: Առաջիկա տարիներին նախատեսված համայնքային ծրագրերի իրականացման գործում նախատեսվում է ներգրավել պետական և դոնոր կազմակերպությունների աջակցությունը:

## 2.5 Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ

Զառիթափի համայնքի բնակչությունը հիմնականում զբաղվում է անասնապահությամբ, մեղվապահությամբ և հողագործությամբ, ինչը ոչ բոլոր դեպքերում է ապահովում բավարար եկամուտներ ապրուստի միջոցները հոգալու համար, նպաստելով համայնքի բնակչության միգրացիայի աճին, հետևաբար համայնքում առաջնային անհրաժեշտություն է աշխատատեղերի ստեղծումը:

Համայնքի Արտավան, Գոմք, Մարտիրոս, Սերս ունի գազաֆիկացման կարիք, որը նույնպես օրակարգային հարց է: և հանդիպումների կազմակերպմանը:

Համայնքում չկան երիտասարդական և այլ ժամանացային կենտրոններ, համայնքի մշակույթի տունը գտնվում է անմխիթար վիճակում ինչը խոչընդոտում է միջոցառումների կազմակերպմանը մշակույթի տանը, այս ամենը նպաստում են երիտասարդների կողմից համայնքը լքելուն:

Հետևաբար ելնելով վերոնշյալ խնդիրներից համայնքի առաջիկա տարիներին նախատեսում է իրականացնել հետևյալ ծրագրերը՝


Զառիթափի խոչորացված համայնքում տեխնիկայի վերազինում և

տուրիստական ենթակառուցվածքների ստեղծում

- Նոր աշխատեղերի ստեղծում
- Գազաֆիկացում Արտավան, Գոմք, Մարտիրոս, Սերս, Բարձրունի, Խնձորուտ և Նոր Ազնաբերդ բնակավայրը
- Փողոցների ամբողջական լուսավորություն Նոր Ազնաբերդ, Սերս, Զառիթափ, Արտավան և մասնակի Մարտիրոս բնակավայրերում
- Համայնքի բոլոր բնակավայրերում գերեզմանոց տանող ճանապարհների և հանդամիջյան ճանապարհների բարեկարգում

- Համայնքի բոլոր բնակավայրերում մաքրության և բարեկարգման խնդիրների կանոնակարգում
  - Ոռոգման և խմելու ջրի ցանցերի բարելավում համայնքի բոլոր բնակավայրերում
  - Զբոսաշրջության զարգացում
  - Համայնքուի բնակավայրերում երիտասարդական կենտրոնների ստեղծում
- Վերնշյալ ծրագրերը նախատեսվում է իրականացնել օգտագործելով համայնքի ուժեղ կողմերը, համայնքային բյուջեի միջոցները, ինչպես նաև ՀՀ Կառավարության և այլ միջազգային կառույցների աջակցությունը:

## 2.6 Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն



### 3. ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱԿՈՐՈՒՄ

#### 3.1 Համայնքի զարգացման տեսլական

Համայնքի տեսլականն է ունենալ զարգացած զբոսաշրջությամբ, գյուղատնտեսությամբ, փոքր բիզնեսներով համայնք, որտեղ բնակիչներ կունենան զբաղվածություն, երիտասարդները կվերադառնան և կմնան համայնքում: Դրան է ուղղված համայնքի կողմից կազմված առաջնահերթ ծրագրերի, նպատակների

ձևակերպումը ըստ առաջնահերթ բնագավառների, որը ներկայացված է հաջորդ բաժնում:

### 3.2 Համայնքի զարգացման ծրագրերի, նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում

Ստորև ներկայացվում է համայնքի զարգացման ծրագրերի, նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում՝ ըստ առանձին բնակավայրերի և բնագավառների.

Ջառիթափ

#### ԾՐԱԳԻՐ 1

##### ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՆՈՐ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐԻ ԱՏԵՂԾՈՒՄ:

Գյուղում կարևոր նշանակություն ունի նոր աշխատատեղերի ստեղծումը: Առաջնային խնդիրներից է ոռոգման ներքին ցանցի կառուցումը, որի արդյունքում ոռոգելի հողոտարածքը կավելանա 190 հա ով:

#### ԾՐԱԳԻՐ 2

Ջառիթափ խոշորացված համայնքում տեխնիկայի վերազինման և տուրիստական ենթակառուցվածքների ստեղծում, Սոցիալական Ներդրումների և Տարածքային Ջարգացման Ծրագրի մասնակցությամբ:

#### ԾՐԱԳԻՐ 3

##### ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՄՔ, ՄԱՐՏԻՐՈՍ, ՍԵՐԱ, ԲԱՐՁՐՈՒՆԻ, ԽՆՁՈՐՈՒՏ և ՆՈՐ ԱԶՆԱԲԵՐԴ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԳԱՋԱՖԻԿԱՑՈՒՄ:

Համայնքի Գոմք, Մարտիրոս, Սերա, Բարձրունի, Խնձորուտ և Նոր Ազնաբերդ բնակավայրերի համար կարևորագույն խնդիր է գազաֆիկացումը: Բնական գազի բացակայությունը համայնքի տարածքում լուրջ խոչընդոտ է հանդիսանում թե՛

ներդրողների և թե՛ ազգաբնակչության տնտեսական զարգացման համար: Բնակիչները օգտագործում են անհամեմատ թանկ հեղուկ գազ և էլեկտրական հոսանք, ինչպես նաև հատում կանաչ տարածքներ: Ծրագիրը իրականացնելու համար անհրաժեշտ է հարցը բարձրացնել համապատասխան գերատեսչությունների և ՀՀ կառավարության առջև:

Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2018-2021 թվականներին՝ պետական աջակցությամբ, որի համար անհրաժեշտ է շուրջ 380 մլն դրամ:

#### **ԾՐԱԳԻՐ 4**

Կիսակառույց Մշակույթի տան կառուցում, որի համար անհրաժեշտ է 280 միլ դրամ :

Ծրագիրը իրականացնելու համար անհրաժեշտ է հարցը բարձրացնել

ՀՀ կառավարություն առջև ստանալու անհրաժեշտ ֆինանսական ներդրումը: համայնքը պատրաստ է 20 տոկոս համաֆինանսավորել

#### **ԾՐԱԳԻՐ 5**

Մանկական խաղահրապարակների կառուցում << Ղ-տելեկոմ>>ՓԲԸ-ի և համայնքի ֆինանսավորմամբ.

#### **ԾՐԱԳԻՐ 6**

##### **ՀԱՄԱՅՆՔԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ:**

Համայնքի համար կարևոր է փողոցային լուսավորությունը: Փողոցային լույսեր են անցկացվել համայնքի գլխավոր փողոցում 2,5կմ, սակայն այն ամբողջությամբ չի ավարտվել: 2018 թվականին նախատեսվում է իրականացնել համայնքի գլխավոր փողոցի մնացած 2,5կմ ճանապարհի լուսավորությունը: Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է 15 մլն ՀՀ դրամ, որը նախատեսվում է իրականացնել համաներդրմամբ: Համայնքի սեփական ներդրումը կկազմի 3 մլն դրամ:

## **ԾՐԱԳԻՐ 7**

### **ՀԱՄԱՅՆՔԻ ԲՈՒՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԻՆՉՊԵՍ ՆԱԼ ԳԵՐԵԶՄԱՆՈՑ ՏԱՆՈՂ ՃԱՆԱՊԱՐՀԻ ԵՎ ՀԱՆՂԱՄԻՋՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ:**

Ներհամայնքային և գերեզմանոցի ճանապարհների անբարեկարգ վիճակը խնդիր է համայնքի բնակիչների համար: Հանդամիջյան ճանապարհների անբարեկարգ վիճակը խոչընդոտ է գյուղացնիերի գյուղատնտեսական աշխատանքների կատարմանը, լրացուցիչ խնդիրներ է առաջացնում տեխնիկայի և բնակիչների համար: Կարևոր է ծրագրի ամբողջական իրականացումը:

Որոշակի աշխատանքներ արդեն կատարվել են վերոնշյալ խնդրի լուծման ուղղությամբ: Նախատեսվում է 2018 թվականի տարեկան բյուջեի միջոցների հաշվին ամբողջությամբ բարեկարգել ճանապարհները , որի համար անհրաժեշտ է նախնական գնահատմամբ 26 մլն դրամ, որով նախատեսվում է բարեկարգել շուրջ 27 կմ ճանապարհ

## **ԾՐԱԳԻՐ 8**

### **ԶԱՌԻԹԱԾ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԶԲՈՍԱԵՐԶՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ:**

Վայոց ձորը յուրօրինակ զբոսաշրջային գոտի է, հարուստ պատմամշակութային արժեքներով և պատմությամբ: Մարզի ռեսուրսները նպաստում են զբոսաշրջության տարբեր ձևերի զարգացմանը, մասնավորապես էկոտուրիզմ, լեռնային տուրիզմ, ագրոտուրիզմ, առողջարանային տուրիզմ, էքստրեմալ տուրիզմ: Այս առումով բացառություն չէ նաև Զառիթափի համայնքը, որի ռեսուրսները նպաստում են զբոսաշրջության վերը նշված ձևերի զարգացմանը, մասնավորապես համայնքի տարածքում է գտնվում Զառիթափում կան XIX դարի եկեղեցի, ամրոցներ (XVII-XVIII դարեր), հյուսիս-արևելյան մասում՝ Սբ. Վառվառա մատուռ (XIX դար): Խաչքարեր 9-18 ռդ դարերի:

Գոմք գյուղ 1989 թ. եկան առաջին հայ բնակիչները, որոնք մարգապուրծ փախել էին Սումգայիթից, Բաքվից, Կիրովաբաթից և այլ վայրերից, մի քանիսն էլ եկան աղետի գոտուց: Գոմք գյուղը գրով հիշատակված է Ստեփանոս Օրբելյանի «Սյունիքի Պատմությունը» մեծարժեք երկում: Մեծանուն պատմիչը պարզել է, որ Գոմք գյուղը վեց չափ հարկ է տվել Տաթևի վանքին, որն էլ նշանակում է, որ շենը եղել է ոչ շատ մեծ:



Գյուղն այդպես էլ հիշատակված է «Գոմք», և հիմնագուրկ է այն ենթադրությանը, թե դա հին Գոմեր գյուղն է:

Շենք եղել է ոչ շատ մեծ, սակայն աչքի է ընկել իր մի հրաշալի զարդով, որը մեր բազմադարյան ճարտարապետության եզակի նմուշներից է: Դա որմնափակ խաչքար-մատուռն է, որն իր կառուցվածքով, մտահաղացմամբ, քանդակներով և վիմագիր հիշատակարաններով մի անգնահատելի կոթող է: Ըստ պահպանված արձանագրության՝ խաչքար-մատուռը կառուցվել է 1263 թվականին:

Գյուղամիջում գտնվում է եկեղեցու ավերակներ, որն իր ոճով ավելի շատ առնչվում է 16-17-րդ դարերին:

Գոմքում կա 1263 թ.-ի մատուռ, XVI-XVII դարերի եկեղեցի և XI-XVII դարերի խաչքարեր:

Արտավան գյուղը նախկինում կրել է Ագխաչ անվանումը և ընդգրկված է եղել Երևանի նահանգի Նախիջևանի գավառում: Ըստ Ալիշանի գյուղը նախկինում եղել է Մեծ

Հայքի Սյունիք աշխարհի Ճահճուկ գավառի Աղբերախաչ գյուղը: Պահպանվել են XVII-XIX դդ. եկեղեցիներ, XIII-XIV դդ. և XIX դարի մատուռներ, խաչքարեր (XI-XV դդ., XVII-XVIII դդ.): Գյուղի կենտրոնում 12-րդ դարում կառուցված կամուրջը: Գյուղից 2 կմ հեռու գտնվում է Սարաթուզ գյուղը իր խաչքարերով և դամբարանադաշտերով, Դարբնի գյուղ իր դամբարանադաշտերով:

Սարավանում գյուղում կան XVII դարի ավերակ եկեղեցի, XIII դարի աղբյուր-հուշարձան, 4-5 կմ հարավ-արևմուտքում՝ XIV-XIX դարերի մատուռ և XI-XVII դարերի խաչքարեր:

Այժմ համայնքում գործում են թվով 6 հյուրատներ, որոնք հաջողությամբ գործում են, սակայն կարիք կա ավելացնելու համայնքում հյուրատների թիվը, որը նախատեսվում է կատարել դոնոր կազմակերպությունների աջակցությամբ (որի փորձը արդեն կա), ինչպես նաև դիմելով ծրագրերի (մասնավորապես մարզում գործում է Թրփանճեան գյուղական համայնքների զարգացման ծրագիրը, որը տրամադրում է 6% վարկեր համայնքների բնակիչների կողմից ներկայացված բիզնես ծրագրերի համար):

Այսպիսով նախատեսվում է համայնքում վերը նշված միջոցներով առաջիկա 5 տարիներին՝ 2017-2021թթ. ավելացնել հյուրատների քանակը, հասցնելով մինչև 30-ի: Ինչպես նաև զարգացնել ագրոտուրիզմը՝ զբոսաշրջային սեզոնին կազմակերպել այցեր ոչ միայն պատմամշակութային վայրեր, այլև մասնակցություն բերքահավաքի, և գյուղատնտեսական արտադրանքների պատրաստման գործընթացներին:

## ԾՐԱԳԻՐ 9

### ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՄԱՔՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄ:

Ջառիթափի համայնքի բոլոր բնակավայրերում չեն իրականացվում կենցաղային աղբի տեղափոխում: Բացի դա համայնքում չկա աղբավայր: Աղբը անխնա թափվում է գյուղերում հոսող գետերի մեջ, ավերին և ծորակներում, որը իրական աղետ է շրջակա միջավայրի, հարակից պտղատու այգիների և ընտանի կենդանիների համար: Հետևաբար անհրաժեշտ է համայնքում իրականացնել շաբաթական 2-3 աղբահանում, տեղափոխել առաջացած ամբողջ աղբը, համայնքի բնակավայրերում տեղադրել աղբամաններ: Անհրաժեշտ է համայնքում առանձնացնել տարածք ախպավայրի համար:

Նախատեսվում է համայնքային բյուջեից ամենամյա ֆինանսական միջոցներ հատկացնել ծրագրի իրականացման համար 2017-2021թթ-ին, որի համար նախատեսվում է համայնքնի սեփական եկամուտներից տարեկան տրամադրել 3,5 մլն դրամ:

## ԾՐԱԳԻՐ 10

### ՈՌՈՂՄԱՆ ԵՎ ԽՄԵԼՈՒ ԶՐԻ ՑԱՆՑԵՐԻ ԲԱՐԵԼԱԿՈՒՄ:

Համայնքի Գոմք, Մարտիրոս, Սերս, Բարձրունի, Խնձորուտ, Նոր Ազնաբերդ և Արտավան բնակավայրերի համար կարևորագույն խնդիր է խմելու ջրագծերի ներքին և արտաքին ցանցերի վիճակը ինչպես նաև Մարտիրոս, Սերս, Բարձրունի, Խնձորուտ և Ջառիթափ գյուղերի խմելու ջրի ջրընդունիչների վիճակը:

Բոլոր գյուղերի ջրընդունիչ և ջրաբախշիչ ջրավազաններում բացակայում է սանիտարական գոտիները:

Մարտիրոս գյուղում անհրաժեշտ է վերանորոգել կոյուղու ներքին ցանցը և կառուցել կեխտաջրերի մաքրման կայանը:

Ջառիթափ համայնքի բոլոր գյուղերում անհրաժեշտ է ոռոգման ցանցի կառուցման և նորոգման աշխատանքներ կատարել, Բարձրունի գյուղում անհրաժեշտ է ոռոգման ջրի ջրամբարը:Պ

Ծրագրի իրականացման համարհամայնքապետարանը կկազմակերպի անհրաժեշտ աշխատանքները և 2017-2018 թվականներին տարեկան բյուջեով կտրամադրի 3.5 հազար դրամ:

## **ԾՐԱԳԻՐ 11**

### **ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՍՏԵՂԾՈՒՄ**

Ջառիթափ համայնքում 16-30 տարեկան բնակչության թիվը կազմում է շուրջ 1235:

Համայնքում բացակայում են ժամանցի վայրերը, մշակույթի տանի շենքային պայմանները օր օրի վատթարանում են, ինչը խոչընդոտում է մշակույթի տանրում միջոցառումներ կամ այլ քննարկումներ կազմակերպելուն: Հետևաբար օրակարգային խնդիր է համայնքում երիտասարդական կենտրոնի ստեղծումը, ինչը կունենա մի քանի դրական արդյունքներ.

- Այն կդառնա հավաքատեղի համայնքի ակտիվ և նախաձեռնող երիտասարդների համար
- Կենտրոնում կկազմակերպվեն սեմինար-քննարկումներ տարբեր թեմաներով, հատկապես համայնքային խնդիրների և դրանք լուծման միջոցների վերաբերյալ
- Կենտրոնում տեղի կունենան հանդիպումներ միջազգային և այլ կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, ովքեր առաջարկում են հետաքրքիր երիտասարդական ծրագրեր
- Կկազմակերպվեն մրցույթներ հարևան համայնքի երիտասարդների մասնակցությամբ:

Ծրագիրը նախատեսվում է կյանքի կոչել միջազգային դոնոր կազմակերպությունների աջակցությամբ, որի դեպքում համայնքը կհատկացնի համայնքային նշանակության

շենք վերակառուցելու համար: Երիտասարդական կենտրոնի հետագա աշխատանքը նախատեսվում է իրականացնել գրանտային ծրագրերով և որոշ ծրագրերի դեպքում՝ համայնքային ֆինանսավորմամբ:

Ծրագիրը կյանքի կոչելու դեպքում համայնքը կտրամադրի համայնքի սեփականություն հանդիսացող շինություն, անհրաժեշտ գումարը ակնկալվում է ստանալ միջազգային դոնոր կազմակերպություններից՝ 13 մլն դրամ:

համար անհրաժեշտ է 5 մլն ՀՀ դրամ, որը նախատեսվում է իրականացնել համաներդրմամբ: Համայնքի սեփական ներդրումը կկազմի 2 մլն դրամ, մնացած 3 մլն ակնկալվում է ստանալ այլ կազմակերպություններից ու ներդրողներից:

սահմաններում 2018-2019թթ. տրամադրել աջակցություն՝ 2 մլն դրամի չափով, մնացած անհրաժեշտ գումարը ակնկալվում է ստանալ համապատասխան մարմիններից և անհատ ներդրողներից:

է համայնքում իրականացնել շաբաթական 2-3 աղբահանում, տեղափոխել առաջացած ամբողջ աղբը, ավելացնել համայնքում առկա աղբամանների թիվը:

Գյուղի գլխավոր ճանապարհի եզրերի ջրահեռացման կիսախողովակների մաքրման կանոնակարգումը արդեն ընթացքի մեջ է, որը պետք է ունենա շարունակական բնույթ: Նախատեսվում է համայնքային բյուջեից ամենամյա ֆինանսական միջոցներ հատկացնել ծրագրի իրականացման համար 2017-2021թթ-ին, որի համար նախատեսվում է համայնքի սեփական եկամուտներից տարեկան տրամադրել 1,5 մլն դրամ:

այն:

- Կենտրոնում կկազմակերպվեն սեմինար-քննարկումներ տարբեր թեմաներով, հատկապես համայնքային խնդիրների և դրանք լուծման միջոցների վերաբերյալ
- Կենտրոնում տեղի կունենան հանդիպումներ միջազգային և այլ կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, ովքեր առաջարկում են հետաքրքիր երիտասարդական ծրագրեր
- Կկազմակերպվեն մրցույթներ հարևան համայնքի երիտասարդների մասնակցությամբ:

Ծրագիրը նախատեսվում է կյանքի կոչել միջազգային դոնոր կազմակերպությունների աջակցությամբ, որի դեպքում համայնքը կհատկացնի համայնքային նշանակության շենք վերակառուցելու համար: Երիտասարդական կենտրոնի հետագա աշխատանքը նախատեսվում է իրականացնել գրանտային ծրագրերով և որոշ ծրագրերի դեպքում՝ համայնքային ֆինանսավորմամբ:


Ծրագիրը կյանքի կոչելու դեպքում համայնքը կտրամադրի համայնքի սեփականություն հանդիսացող շինություն, անհրաժեշտ գումարը ակնկալվում է ստանալ միջազգային դոնոր կազմակերպություններից՝ 13 մլն դրամ:

#### 4. ՀԶԾ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

Համայնքի զարգացման ծրագրում նախատեսված ծրագրերը և այլ աշխատանքներ ուղղված համայնքի զարգացմանը կիրականացվեն օգտագործելով համայնքի սեփական եկամուտները, ՀՀ Կառավարության պետական աջակցությունը, միջազգային և դոնոր կազմակերպությունների, ինչպես նաև անհատ ներդրողների աջակցությամբ: Նշված ներդրումները և աջակցությունը ստանալու համար այժմ տարվում են աշխատանքներ:

Մասնավորապես ՀԶԾ-ում նշված մի քանի ծրագրերը նախատեսվում է իրականացնել ՀՀ Կառավարության և անհատ ներդրողների աջակցությամբ: Ծրագրերի մի մասը կիրականացվեն համայնքի սեփական եկամուտների հաշվին:

Ստորև ներկայացվում է 2017-2021թվականների ընթացքում վերոնշյալ ծրագրերի և աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսավորման աղբյուրները և դրանց չափերը:



Վերոնշյալ ծրագրերի բյուջեները հաշվարկված են նախնական գնահատմամբ, նախատեսվում է այդ ծրագրերը իրականացնել համաներդրմամբ՝ ներգրավելով համայնքի սեփական եկամուտները, ՀՀ Պետական աջակցությունը, ինչպես նաև միջազգային և դոնոր կազմակերպությունների, անհատ ներդրողների աջակցությունը:

## 5. ՀԶԾ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ

Համայնքի ՀԶԾ ծրագրով ներառված զարգացման ծրագրերը և աշխատանքները կարևոր են համայնքի զարգացման գործում, որոնք միտված են գլխավորապես համայնքի բնակչության կենսամակարդակի և ապրուստի պայմանների բարելավմանը, այդ իսկ պատճառով ՀԶԾ-ի մոնիթորինգը շատ կարևոր:

Նախատեսվում է մոնիթորինգ իրականացնել 5 տարիների ընթացքում վերը նշված բոլոր ծրագրերի իրականացման ժամանակ, ինչպես նաև իրականացնել մոնիթորինգ յուրաքանչյուր ծրագրի ավարտից հետո հասկանալու ստացված օգուտները և հետագայում նմանատիպ ծրագրերի իրականացման ընթացքում կատարվելիք բարեփոխումները:

Մասնավորապես մոնիթորինգի կենթարկվեն հետևյալ ցուցանիշները.

- յուրաքանչյուր ծրագրի բյուջեն, դրա ֆինանսավորման աղբյուրները,
- ծրագրի օգուտները և արդյունքները,
- ներգրավված բնակիչների թիվը,

Կատարված մոնիթորինգի արդյունքները կամփոփվեն և կներկայացվեն համայնքի բնակչության ուշադրությանը տարին մեկ անգամ՝ հրավիրելով համայնքի ընդհանուր ժողով: Այն կօգնի ապահովել ՏԻՄ աշխատանքների թափանցիկություն, ինչպես նաև յուրօրինակ հարթակ կհանդիսանա լսելու համայնքի բնակիչների առաջարկությունները և կարծիքները: